

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակցիզային հարկի հաշվարկման, վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների, ակցիզային հարկ վճարողների (այսուհետ՝ հարկ վճարողներ) շրջանակը, ակցիզային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, ինչպես նաև սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը:

Հոդված 2. Ակցիզային հարկը

Ակցիզային հարկը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ապրանքների ներմուծման կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Հոդված 3. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները և հարկ վճարողները

1. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ են՝ զարեջուրը, խաղողի և այլ գինիները,^{*)} սպիրտը (*բացառությամբ խաղողի գինեջուրից ստացված կոնյակի սպիրտի*)^{*)} և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարետները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի):

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակցիզային հարկ վճարում են վերոհիշյալ ապրանքները ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շալցնող կամ այլ կերպ տարայավորող) իրավաբանական (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաձյուղերը) և ֆիզիկական անձինք:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում (*հաշվառում*)^{*)} ստացած անձանց հետ կնքված պայմանագրերով և նրանց կողմից տրված հումքից (այդ թվում՝ շալցման կամ այլ տարաներով տարայավորման) հանրապետության տարածքում արտադրվող (պատրաստվող, շալցվող) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում են այդ անձինք (պատվիրատուները):

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում (*հաշվառում*)^{*)} չստացած անձանց հետ կնքված պայմանագրերով և նրանց կողմից տրված հումքից (այդ թվում՝ շալցման կամ այլ տարաներով տարայավորման) հանրապետության տարածքում արտադրվող (պատրաստվող, շալցվող) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում են դրանք արտադրող (պատրաստող, շալցնող) անձինք:

5. Որպես գրավի առարկա գրավառուին հանձնված ապրանքների տնօրինման իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում ակցիզային հարկի վճարման պարտավորությունը կրում է գրավատուն, եթե վերջինս, սույն օրենքի համաձայն, համարվում է հարկ վճարող:

Հոդված 4. Ակցիզային հարկով հարկվող օբյեկտը և հարկման բազան

1. Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում՝

ա) «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրողների (ներառյալ՝ շալցնողների կամ այլ կերպ տարայավորողների) կողմից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարումը (այդ թվում՝ անհատույց):

Սույն հոդվածի կիրառման առումով հարկվող օբյեկտ է համարվում նաև գույքի (ներառյալ՝ ապրանքների), ծառայությունների, աշխատանքների և գույքային իրավունքների դիմաց ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարումը (փոխանակումը):

Սույն հոդվածի կիրառման առումով ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է առաջանում նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում:^{*)}

2. Սույն օրենքի իմաստով հարկման բազա է համարվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արժեքը (այդ թվում՝ մաքսային) կամ ապրանքների քանակը^{*)} (ծավալը)՝ արտահայտված սույն օրենքով սահմանված չափման բնաիրային միավորներով, որի նկատմամբ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է ակցիզային հարկի գումարը:

Հոդված 5. Ակցիզային հարկի դրույքաչափերը

1. Ակցիզային հարկը վճարվում է հետևյալ դրույքաչափերով՝

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	գարեջուր	ներքին արտադրանքի 1 լիտրի համար ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	70 105
2204	խաղողի և այլ գինիներ	բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 100 դրամ 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 150 դրամ
2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	ներքին արտադրանքի 1 լիտրի համար ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	500 600
2206	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրարմպելիք)	ներքին արտադրանքի 1 լիտրի համար ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	180 200
2207	էթիլային սպիրտ	ներքին արտադրանքի 1 լիտրի համար (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	600 700
2208	սպիրտային խմիչքներ, բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող ներմուծվող օղիների	բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 250 դրամ 30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 600 դրամ
	ԱՏԳԱԱ 2208 ապրանքային	մաքսային արժեք	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի

	ծածկագրին դասվող ներմուծվող օդիներ		համար՝ 500 դրամ
2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1500
2709	հում նավթ և նավթամթերք	1 տոննա	27000
271011	բենզին	1 տոննա	25000 դրամ
2710	դիզելային վառելիք	մաքսային արժեք	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար՝ 32500 դրամ
2711 (բացառությամբ 2711 11-ի և 2711 21-ի)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)	1 տոննա	1000 ^{*2), *8)}

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան 2208 ծածկագրում ներառված՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքատեսակների համար սպիրտայնության՝ 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ խաղողի գինեկության ստացված կոնյակի սպիրտի)^{*8)}, իսկ մինչև 9 տոկոս, ներառյալ՝ ^{*8)} սպիրտայնություն պարունակող խմիչքների համար սահմանվում է յուրաքանչյուր լիտրի համար՝ 100 դրամ:^{*2)}

3. Ծխախոտի արտադրանքի ^{*8)} ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվում են առանձին օրենքներով:

4. Օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և 2208 ծածկագրին դասվող ապրանքների՝ ակցիզային հարկ վճարող համարվող անձանց, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3000 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և 2208 ծածկագրին դասվող ապրանքների՝ ակցիզային հարկ վճարող համարվող անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3500 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծված ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և 2208 ծածկագրին դասվող ապրանքների ակցիզային հարկ վճարող համարվող անձանց, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3500 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:^{*7)}

6. Բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարը 112000 Հայաստանի Հանրապետության դրամից պակաս լինելու դեպքում, ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը հավասարվի 112000 Հայաստանի Հանրապետության դրամի:^{*9)}

Հոդված 6. Ակցիզային հարկի արտոնությունները

1. Ակցիզային հարկով չեն հարկվում

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից ակցիզային հարկով հարկման ենթակա՝ արտահանված ապրանքների օտարումը (իրացումը), եթե առկա է սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված փաստաթուղթը.

բ) «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված մաքսային ռեժիմներով հանրապետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող

ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները.

զ) օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը և օտարումը.

դ) մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերազանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

ե) (ուժը կորցրած է ճանաչվել) ^{*)3), *8)}

2. Օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկի այլ արտոնություններ:

Հոդված 7. Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորումը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման կարգ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող USQ ԱԱ-2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող ապրանքների հանրապետության տարածքում հարկային հսկողության ու հաշվառման կարգ, այդ թվում՝ իրացման քանակների հաշվառման հատուկ կարգ և պահանջներ, նշված ապրանքների դրոշմավորման, դրոշմանիշերի ձևին, տրամադրմանը, օգտագործմանը, վերադարձմանը, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների իրացմանը ներկայացվող պահանջներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Հայաստանի Հանրապետությունից բացի) ներմուծվող՝ USQ ԱԱ - 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման մաքսային հսկողության ու հաշվառման կարգը, նշված ապրանքների դրոշմավորման, դրոշմանիշերի ձևին, տրամադրմանը, օգտագործմանը, վերադարձմանը, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների իրացմանը ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:^{*)1)}

1¹. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ապրանքների դրոշմավորման համար ակցիզային դրոշմանիշներ ձեռք բերելու համար հարկային մարմին ներկայացվում են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ձևին համապատասխան դիմում՝ 2 օրինակից.

2) ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) հաշվետվություն՝ ձեռք բերված ակցիզային դրոշմանիշների օգտագործման մասին, հարկային մարմնի սահմանած ձևով.

4) արտադրողների (ներառյալ՝ շալցում իրականացնողների) կողմից որպես հումք ձեռք բերված սպիրտի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի պատճենները.

5) լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի ու համապատասխանության սերտիֆիկատի (պարտադիր լինելու դեպքում) պատճենները: Լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենները կարող են չներկայացվել, եթե դրանք տվյալ տարվա համար մեկ անգամ արդեն ներկայացվել են: Համապատասխանության սերտիֆիկատը գործողության յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ներկայացվում է մեկ անգամ: Այս դեպքում սույն կետում նշված փաստաթղթերին կից ներկայացվող գրությունում նշվում են այն գրության ամսաթիվը և համարը, որին կից ներկայացվել են այդ պատճենները:

1². Ակցիզային դրոշմանիշները տրամադրվում են սույն հոդվածի 1¹-րդ մասում նշված փաստաթղթերի և արտադրողների մոտ հարկային մարմինների կողմից արտադրական կարողությունների ուսումնասիրության վերաբերյալ կազմված տեղեկանքի հիման վրա: Հարկային մարմինն ակցիզային դրոշմանիշները տրամադրում է փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Ակցիզային դրոշմանիշներ չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից, կամ ^{*)6)} արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշների քանակին: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարի գումարին կամ ^{*)6)} արտադրական հզորություններին համապատասխան:

1³. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ալկոհոլային խմիչքի արտադրանքի համար՝ 50 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ, բացառությամբ բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած ապրանքների դրոշմավորման համար ակցիզային դրոշմանիշների:

1⁴. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար տարաների թույլատրելի չափեր:^{*)5)}

2. Հարկ վճարողների համար ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման համար վճարված գումարը համարվում է հաշվարկված ակցիզային հարկի կանխավճար, իսկ օրենսդրությամբ սահմանված կարգով ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների համար՝ հաստատագրված վճարներից նվազեցման ենթակա գումար, և չի կարող հաշվանցվել այլ հարկային պարտավորությունների հաշվին, բացառությամբ դրոշմավորման կարգով նախատեսված դեպքերի:

3. *Զօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշների վերադարձը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետից ուշացնելու կամ սույն հոդվածի 4-րդ մասում սահմանած դեպքերում հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու դեպքերում չվերադարձված կամ հետ չընդունված ակցիզային դրոշմանիշների թվին, տեսակին և տարողությանը համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար սույն օրենքով սահմանված կարգով վճարվում է ակցիզային հարկ:*

4. *Հարկ վճարողի կողմից վերադարձվող ակցիզային դրոշմանիշները հարկային մարմինների կողմից չեն ընդունվում, եթե չեն պահպանվել հետևյալ պայմանները՝*

ա) *ակցիզային դրոշմանիշները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի և անհարթությունների.*

բ) *պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի սերիան և դրա կենտրոնական մասը.*

գ) *ակցիզային դրոշմանիշի պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացված լինեն.*

դ) *վերադարձվող յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:*

5. *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած նմուշի դրոշմանիշները կիրառության մեջ են դրվում և կիրառությունից հանվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ: Այդ դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրելու ժամկետը չի կարող պակաս լինել երկու տարուց՝ սկսած դրոշմանիշները կիրառության մեջ դնելու պահից կամ 6 ամսից՝ դրան հաջորդող նմուշի դրոշմանիշները կիրառության մեջ դնելու պահից:*⁷⁾

Հոդված 7¹. (Ուժը կորցրած է ճանաչվել) ^{7),⁹⁾}

Հոդված 7². (Ուժը կորցրած է ճանաչվել) ^{7),⁹⁾}

Հոդված 8. Ակցիզային հարկի վճարումը և հաշվարկների ներկայացումը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար սույն օրենքով սահմանված կարգով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Սույն կետով նշված դեպքում վճարողներն ակցիզային հարկի վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմիններին հաշվարկ չեն ներկայացնում:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար սույն օրենքով սահմանված կարգով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց համար ակցիզային հարկի *հաշվարկման ու վճարման*⁸⁾ գծով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

3. *Սույն հոդվածի 2-րդ կետում նշված վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ վճարում են ակցիզային հարկը և յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ համապատասխան հարկային մարմին ներկայացնում ակցիզային հարկի հաշվարկ հարկային մարմնի սահմանած ձևով:*⁹⁾

Ակցիզային հարկի հաշվարկը ներկայացվում է նաև սույն հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետում նախատեսված դեպքում:

4. *Հարկ վճարողի կողմից ակցիզային հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման և սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ, որոնց ներկայացման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության*⁹⁾ *հետ:*^{2),⁸⁾}

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում *բանկային վճարմամբ*⁴⁾ ձեռք բերված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց սույն օրենքին համապատասխան վճարված ակցիզային հարկի գումարը՝

ա) այդ հումքից պատրաստված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանման դեպքում ենթակա է վերադարձման սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում.

բ) բացառությամբ սույն հոդվածի 6-րդ կետում նշված դեպքի, պակասեցվում է դրանց համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա ակցիզային հարկի ընդհանուր գումարից⁴⁾:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ

արտադրողների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում *բանկային վճարմանը*⁴⁾ ձեռք բերված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց սույն օրենքին համապատասխան վճարված ակցիզային հարկի գումարի՝ այդ հումքից պատրաստված ակցիզային հարկով հարկված ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցող մասը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ:

6¹. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ակցիզային հարկով հարկված ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռք բերված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ ակցիզային հարկով հարկված ենթակա հումքի դիմաց սույն օրենքին համապատասխան վճարված ակցիզային հարկի գումարը՝ ակցիզային հարկով հարկված ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարին գերազանցելու դեպքում, գերազանցող մասը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով և 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի, հաշվանցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջաններում՝ սույն օրենքի համաձայն վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների հաշվին:⁴⁾

7. Որպես հումք ձեռք բերված՝ ակցիզային հարկով հարկված ենթակա ապրանքների համար օրենքի համաձայն հարկային հաշիվ համարվող հաշվարկային փաստաթղթում առանձնացված ակցիզային հարկի գումարը հաշվանցվում է սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:⁷⁾

8. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում ակցիզային հարկը վճարվում է ակցիզային դրոշմանիշների վերադարձման ժամկետը լրանալու կամ հարկային մարմինների կողմից դրոշմանիշները հետ չընդունվելու ամսվան հաջորդող ամսվա մինչև 20-ը¹⁰⁾:

Վնասված ակցիզային դրոշմանիշները սահմանված կարգով հարկային մարմիններ վերադարձվելու (վերջիններիս կողմից հետ ընդունվելու) դեպքերում վերադարձման ենթակա ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման համար նախկինում պետական բյուջե վճարված գումարը նվազեցվում է նույն ակցիզային դրոշմանիշների տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով:

Ակցիզային դրոշմանիշների յուրաքանչյուր նմուշի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափի վերաբերյալ տեղեկանքը հարկ վճարողին տրվում է համապատասխանաբար հարկային մարմնի կողմից՝ հարկ վճարողի պահանջով: Տեղեկանքը տրվում է հարկ վճարողի դիմումի ստացմանը հաջորդող 15-րդ օրվանից ոչ ուշ:¹¹⁾

Հոդված 9. Ակցիզային հարկի վերադարձման կարգը

1. Պետական գրանցում (*հաշվառում*)⁹⁾ ստացած անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ակցիզային հարկ վճարողներից ձեռք բերված ակցիզային հարկով հարկված ապրանքների արտահանման դեպքում վճարված ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման՝ այդ անձանց հարկային այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե նշված անձանց կողմից համապատասխան հարկային մարմին են ներկայացվում՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակցիզային հարկ վճարողներից ակցիզային հարկով ձեռք բերված ապրանքների *առանձին տողով առանձնացված ակցիզային հարկի գումարով՝ օրենքով հարկային հաշիվ համարվող և վճարումը հիմնավորող փաստաթղթերի*⁷⁾ պատճենները.

բ) մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով «արտահանում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում» *ռեժիմով լրացված մաքսային հայտարարագրի*^{2), 8)} պատճենը՝ «Բացթողումը թույլատրված է» նշումով:

2. Հարկի գումարը օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձվում է այլ հարկային պարտավորություններ չունենալու դեպքում կամ հաշվանցվում է այլ հարկային պարտավորությունների հաշվին՝

ա) ակցիզային հարկ վճարող անձանց համար՝ սույն օրենքով սահմանված յուրաքանչյուր *երամսյակի*⁹⁾ ակցիզային հարկի հաշվարկների հիման վրա՝ հարկ վճարողի դիմումի և սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում.

բ) ակցիզային հարկ վճարող չհամարվող անձանց համար՝ նրանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմնի սահմանած ձևով դիմումի և սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Հոդված 10. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. *Ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկված բազան թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ակցիզային հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 20 տոկոսի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկված բազան կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ տուգանք՝ այդ գումարի 40 տոկոսի չափով:*¹¹⁾

3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշված կարգով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք 200 հազար դրամի չափով:

4. (ուժը կորցրած է ճանաչվել) ^{*7), *9)}

Հոդված 11. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական-նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական-նորմատիվ ակտերն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինը՝ *համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ֆինանսների և կոնոմիկայի նախարարության հետ:* ^{*2)}

Հոդված 12. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1998թ. օգոստոսի 4-ի «Ակցիզային հարկի մասին» և 1999թ. դեկտեմբերի 31-ի «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

01 հուլիսի 2003թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-52

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը ^{*4)}**

**«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2....

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռք բերված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի պակասեցման (հաշվանցման) կարգի վրա: Այդ գումարների հաշվառումը և հաշվանցումը կատարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը ^{*11)}**

**«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:
2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները կիրառվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված խախտումների մասով:

*1) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.06.04 ՀՕ-126) խմբագրությամբ:

*2) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (28.12.05 ՀՕ-247) խմբագրությամբ:

*3) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (14.06.06 ՀՕ-297) խմբագրությամբ:

*4) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (12.12.07 ՀՕ-92) խմբագրությամբ :

*5) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (24.12.08 ՀՕ-82-Ն) խմբագրությամբ :

*6) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (24.06.09 ՀՕ-40-Ն) խմբագրությամբ:

*7) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (17.02.10 ՀՕ-11-Ն) խմբագրությամբ:

*8) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 ՀՕ-66-Ն) խմբագրությամբ:

*9) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.12 ՀՕ-43-Ն) խմբագրությամբ:

*10) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.12.13 ՀՕ-65-Ն) խմբագրությամբ:

*11) «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.15 ՀՕ-66-Ն) խմբագրությամբ: